«Շատ նվերներ քո Telcell Wallet-ում» անվանումով գովազդային վիճակախաղի կանոններ

«Շատ նվերներ քո Telcell Wallet-ում» անվանումով գովազդային վիճակախաղի կանոններ

1. Ներածություն

1.1. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) կազմակերպում է «Շատ նվերներ քո Telcell Wallet-ում» անվանումով գովազդային վիճակախաղ, Ընկերության գովազդային քաղաքականության շրջանակներում՝ Ընկերության Telcell Wallet հավելվածով մատուցվող ծառայությունները գովազդելու նպատակով:

1.2. Գովազդային վիճակախաղի կանոններ սահմանող սույն փաստաթուղթը (այսուհետ՝ Կանոններ) հանդիսանում է հրապարակային առաջարկ (օֆերտա)՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 451-րդ հոդվածի և 453-րդ հոդվածի 2-րդ մասի տրամաբանությամբ:

Հիմնական հասկացություններ.

1.3. **Կազմակերպիչ՝** Սույն կանոններով սահմանված գովազդային վիճակախաղի կազմակերպիչն է «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն:

1.4. **Մասնակից՝** Telcell Wallet բջջային հավելվածի այն օգտատերը, որոնք համապատասխանում են սույն կանոնների պայմաններին: Գովազդային վիճակախաղին մասնակցելու իրավունք չունեն Կազմակերպչի հետ Վիճակախաղի անցկացման պահին աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձինք, ինչպես նաև այն անձինք, որոնց հետ աշխատանքային հարաբերությունները դադարեցվել են վիճակախաղի անցկացմանը նախորդող երեք տարիների ընթացքում:

1.5. **Գովազդային վիճակախաղ՝** հաղթողները որոշվում են պատահականության սկզբունքով:

2. Ընդհանուր դրույթներ

2.1. Telcell Wallet օգտատերերի համար իրականացվող Գովազդային վիճակախաղի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը տրամադրվում է https://blog.telcell.am/ կայքում:

2.2. Մասնակցելով Գովազդային վիճակախաղին՝ մասնակիցն անվերապահորեն ընդունում է Կանոններով սահմանված պայմանները և դրույթները:

2.3. Կանոններին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

2.4. Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել Կանոններով, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի Գովազդային վիճակախաղի 2.1 կետում նշված հարթակում:

2.5. Գովազդային վիճակախաղի շրջանակում նվերները տրամադրվում են առանց որևէ հարկային պարտավորության: Հարկային պարտավորությունների կատարումը ստանձնում է Կազմակերպիչը:

2.6. Գովազդային վիճակախաղին մասնակցության համար որևէ վճար չի գանձվում:

2.7. Գովազդային վիճակախաղի շրջանակում յուրաքանչյուր հաղթող Մասնակցի Կանոններով սահմանված կարգով Նվերը կտրամադրվի:

2.8. Նվերը ենթակա չէ փոխարինման կամ փոխանակման գումարի հետ:

2.9. Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում տրամադրված Նվերի որակի և մատուցված ծառայության համար:

2.10. Գովազդային վիճակախաղի հաղթողները պարտավորվում են տալ համաձայնություն՝ հրապարակել և տարածել հաղթողի անուն ազգանունը, տեսա-ձայնա-լուսանկարահանել նվերն ու հաղթողին և արդյունքը հավաքագրել, պահպանել և տարածել՝ գովազդային և օրինական այլ նպատակներով: Սույն կետի խախտման դեպքում նվերը ենթակա չէ հանձման հաղթողին:

2.11. Կանոններով նախատեսված ցանկացած հիմքով չտրամադրված նվերը մնում է Ընկերության հայեցողության ներքո:

2.12. Կազմակերպչի կողմից զեղծարար վճարման վերաբերյալ հիմնավոր կասկած ունենալու պարագայում Օգտատիրոջ մասնակցությունը կարող է անվավեր ճանաչվել՝ առանց հավելյալ ծանուցման: Զեղծարար վճարման չափանիշները սահմանվում և որոշվում են Կազմակերպչի կողմից:

3. «Շատ նվերներ քո Telcell Wallet-ում» անվանումով գովազդային վիճակախաղի մասնակցության և անցկացման կարգը

3.1. «Շատ նվերներ քո Telcell Wallet-ում» անվանումով գովազդային վիճակախաղին մասնակցելու իրավունք են ստանում Telcell Wallet-ի բոլոր այն օգտատերերը, որոնք 2025 թվականի նոյեմբերի 01-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ ժամանակահատվածում կատարում են Կանոնների 3.1.1. կետում սահմանված գործողությունները:

3.1.1. Գովազդային վիճակախաղի մասնակցության պայմաններ.

- Առնվազն մեկ անգամ բոնով փոխանակում Գովազդային վիճակախաղի կտրոնի հետ:
- Առնվազն մեկ ուղետոմսի կամ փաթեթի ձեռքբերում TCW-ով:

- Գովազդային վիճակախաղի ամփոփման օրվա դրությամբ Telcell քոբրենդային Visa թվային քարտի բացման հայտի և համապատասխան բանկի կողմից քարտի թողարկման հաստատման առկայություն: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ Կազմակերպիչն իրավունք ունի դիտարկել Telcell քոբրենդային Visa թվային քարտի բացման հայտի մերժման դեպքերը և սեփական հայեցողությամբ Telcell քոբրենդային Visa թվային քարտի բացման հայտի ներկայացումը որոշ մերժված հայտերի դեպքում համարել բավարար Գովազդային վիճակախաղին մասնակցելու համար:

3.1.2. Խաղարկության կտրոններ տրվում են նաև ներքոհիշյալ վճարումներից և գործողություններից.

- Telcell քոբրենդային Visa թվային քարտի բացում և ակտիվացում - 10 կտրոն: Ընդ որում, կտրոն չեն կարող ստանալ այն օգտատերերը, ովքեր կդադարեցնեն գործող քարտի գործունեությունը և կրկին կպատվիրեն նոր քարտ: Կտրոն կարող են ստանալ միայն այն օգտատերերը, ովքեր նախքան Գովազդային վիճակախաղի հայտարարումը չեն ունեցել Telcell Visa Digital թվային քարտ:
- TCW-ով վարկերի ստացում և օգտագործում - 10 կտրոն
- TCW-ով Միջազգային փոխանցումների ստացում - 10 կտրոն
- TCW-ով QR/E-com վճարումներ - 5 կտրոն: Ընդ որում, վճարումների չեղարկման դեպքում կտրոնը օգտատիրոջը ենթակա չէ տրամադրման:
    - Ամեն 5,000 դրամ և ավելի տրանզակցիայի համար
- TCW-ով մանուշակագույն օպերատորական վճարումների կատարում (Ինտերնետ և TV, Վարկեր, Բանկեր, Բուքմեյքեր, Մեքենա, Խաղեր, Տաքսի) - 10 կտրոն
    - Ամեն 5,000 դրամ և ավելի տրանզակցիայի համար
- 100% by Telcell-ի լիցքավորման սարքի վարձակալություն - 1 կտրոն
- TCW-ով յուրաքանչյուր 10 մեկանգամյա տրանսպորտային տոմս - 1 կտրոն
- TCW-ով յուրաքանչյուր 1 շաբաթվա փաթեթի գնում - 5 կտրոն
- TCW-ով յուրաքանչյուր ամսական փաթեթի գնում - 20 կտրոն
- TCW-ովյուրաքանչյուր տարեկան փաթեթի գնում - 100 կտրոն

3.2. Վիճակախաղի անցկացման կարգը.

3.2.1. Գովազդային վիճակախաղի կտրոնները ավելանում են TCW-ի BON (Բոն Մարքեթի) բաժնի «Իմ ապրանքերը» ենթաբաժնում ավտոմատ կերպով:

3.2.2. Խաղարկվում է ընդհանուր 12 նվեր, որոնք ներկայացված են 3.3.1. կետում:

3.2.3. Հաղթողները որոշվում են տվյալ պայմանները բավարարած՝ 3.1.1. կետում նշված պայմաններին բավարարող բոլոր Մասնակիցների միջև՝ պատահական ընտրության սկզբունքով:

3.2.4. Վիճակախաղի արդյունքներն ամփոփվում են մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:

3.3. Մրցանակային ֆոնդ և հանձնման կարգ.

3.3.1. «Շատ նվերներ քո Telcell Wallet-ում» անվանումով գովազդային վիճակախաղի մրցանակային ֆոնդը բաղկացած է 12 նվերներից, որոնք խաղարկվելու են նախապես սահմանված հերթականությամբ: Մրցանակներն են՝ 2 հատ iPhone 17 pro 256gb, 2 հատ Dyson Airwrap id HS08 , 2 հատ Apple Watch Series 11, 2 հատ AirPods Pro 2, 2 հատ MacBook Air 15.3" 16/256gb և գլխավոր մրցանակը՝ 2 հատ 2 հոգու համար նախատեսված 7 օրյա (7 օր, 6 գիշեր) ուղևորության all inclusive փաթեթ դեպի Աբու Դաբի: Փաթեթը ներառում է երկկողմանի ավիատոմսեր, 5 աստղանի հյուրանոց, 3 անգամյա սնունդ:

3.3.2. Հաղթող մասնակիցն իրավունք ունի գրավոր դիմումի համաձայն իր նվերը փոխանցել 3-րդ անձի:

3.3.3. Հաղթող մասնակիցն իրավունք ունի հրաժարվել նվերից՝ գրավոր դիմումի համաձայն:

3.3.4. Միևնույն մասնակիցը կարող է հաղթել միայն մեկ մրցանակ:

3.3.5. Նվերների խաղարկման հերթականությունը սահմանվելու է նախապես, հայտարարվելու է ուղիղ եթերի ժամանակ և իրականացվելու է ըստ կարգի:

3.3.6. Նվերի տրամադրման վերաբերյալ յուրաքանչյուր հաղթող Մասնակից կստանա պաշտոնական էլեկտրոնային ծանուցում Կազմակերպչի info@telcell.am էլեկտրոնային հասցեից, որտեղ նշված կլինի նվերը ստանալու ամսաթվերը: Գլխավոր նվերի դեպքում կնշվի նաև ծառայությունը մատուցողի տվյալները և փաթեթից օգտվելու կարգը: Հաղթող Մասնակիցը պարտավորվում է ծանուցման մեջ նշված ամսաթվից հետո 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում անձամբ ներկայանալ Ընկերության գրասենյակ՝ ներկայացնելով իր անձը հաստատող վավեր փաստաթուղթ:

3.3.7. Նվերը ստանալուց հետո հաղթողը ստորագրում է նվերի ստացումը հավաստող փաստաթուղթ (այսուհետ՝ Ստացական): Ստացականի ստորագրմամբ հաղթողը հավաստում է, որ Նվերը ստացել է ամբողջական և պատշաճ տեսքով, և դրա հետ կապված Կազմակերպչի նկատմամբ որևէ պահանջ կամ բողոք չունի:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել https://telcell.am/ կայք կամ զանգահարել +374 60 272222, +374 60 272223 հեռախոսահամարներով:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: